

ՈՐՈՇ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ «ԱԿՆՀԱՅՏ ԱՆԱՐԴԱՐ ԴԱՏԱՎՃԻՌ, ՎՃԻՌ ԿԱՄ ԴԱՏԱԿԱՆ ԱՅԼ ԱԿՏ ԿԱՅԱՑՆԵԼԸ» ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արթուր Նահապետյան

*Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայի
իրավագիտության ամբիոնի ասպիրանտ*

Յուրաքանչյուրի իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավունքին համապատասխանում է պետության պարտականությունը, որն իրականացվում է իշխանության թեև բոլոր ճյուղերի մասնակցությամբ, բայց հատկապես դատական իշխանության իրավապաշտպան գործունեության միջոցով:

Դատական իշխանության գործունեության յուրահատուկ բնույթն առաջին հերթին պայմանավորված է իրավական նորմերի գործադրման և մեկնաբանման, ինչպես նաև արդարադատություն իրականացնելու հետ: Ստանձնելով հանրային արբիտրի դերակատարություն՝ դատական իշխանությունը միաժամանակ պաշտպանում է իրավունքով կարգավորվող գործունեության բոլոր ոլորտները¹: Դատական իշխանությունն իրականացվում է սահմանադրական, քաղաքացիական, քրեական և վարչական գործերով արդարադատություն իրականացնելու միջոցով: Այս առումով հասարակական հարաբերությունների՝ սահմանադրությամբ կարգավորված և պաշտպանվող կենսաձևն ապահովելու հարցում առանցքային տեղ է գրավում արդարադատության պատշաճ իրականացումը, առանց որի հնարավոր չէ երաշխավորել իրավական պետության գործառնությանն առաքելության համարժեք իրականացումը²:

ՀՀ սահմանադրության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով 63 հոդվածի առաջին մասով ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Այսպիսով, դատական իշխանության գլխավոր գործառնությամբ, նրա հիմնական առաքելությունը մարդու իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունն է: Այդ գործառնություն իրականացվում է ինչպես այն դեպքերում, երբ իրավակարգը խախտվում է մասնավոր անձանց կողմից, այնպես էլ, երբ այդպիսի խախտում թույլ է տրվում պետաիշխանական լիազորությամբ օժտված պաշտոնատար անձանց կամ պետության կողմից առհասարակ, երբ վերջինը իր համապարտադիր որոշումներով կամ որևէ այլ ձևով խախտում է մարդու բնական և անօտարելի իրավունքները կամ իշխանության կազմակերպման և իրականացման

¹ Տե՛ս **Водяная В.Ю., Досаева Г.С., Серегина Е.В.** О некоторых уголовно-правовых и процессуальных аспектах привлечения к уголовной ответственности за вынесение заведомо-неправосудных приговора, решения или иного судебного акта, 2012, էջ 3:

² Տե՛ս **Առաքելյան Ս.Վ.** ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված հանցակազմի կատարելագործման հիմնական ուղղությունները. «Քննքեր Երևանի համալսարանի. իրավագիտություն», 2015, N1 (16), էջ 35:

սահմանադրական կարգը¹:

Սահմանադրության մեկ այլ՝ 162 հոդվածի համաձայն. «Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան»:

Միաժամանակ, բոլոր այն դեպքերում, երբ դատարանի կողմից վերոնշյալ լի-րագրությունը իրացվում է սահմանված իրավական պահանջների էական խախտմամբ, առաջ են գալիս քրեաիրավական որոշակի հետևանքներ, որոնք նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետև՝ Օրենսգիրք) մասնավորապես 352 հոդվածով: Ուստի ամենևին պատահական չէ քննարկվող հանցակազմի նախատեսումը Օրենսգրքի հենց «Արդարադատության դեմ ուղղված հանցագործությունները» վերտառությամբ գլխում:

Այսպիսով, Օրենսգրքի հոդված 352-ի 1-ին մասը սահմանում է. «**Պատավորի կողմից շահադիտական կամ անձնական այլ դրողուններով ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու, կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով**»:

Իսնդրո առարկա հանցագործության **օբյեկտի** որոշման վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ առկա են բազմաբնույթ մոտեցումներ:

Այսպես, Լ. Վ. Լոբանովան գտնում է, որ այս հանցագործության օբյեկտը հասարակական այն հարաբերություններն են, որոնք ապահովում են դատարանի՝ ձանաչողական-իրավակիրառ գործունեությունը²:

Ս. Ֆ. Միլյուկովը որպես քննարկվող հանցագործության օբյեկտ դիտում է առաջին ատյանի և մյուս ատյանների դատարաններում քրեական, քաղաքացիական, վարչական և սահմանադրական արդարադատության իրականացման կապակցությամբ ծագող հասարակական հարաբերությունները³:

Պ. Վ. Տեպլյաշինի կարծիքով, այս հանցագործության անմիջական օբյեկտը ներառում է դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու կապակցությամբ դատարանների պատշաճ գործունեության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները⁴:

Իսկ Ա. Վ. Ֆյոդորովը որպես սույն հանցագործության օբյեկտ է համարում անհատի, հասարակության ու պետության իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով դատարանի կողմից արդարադատության իրականացման ընթացքում օրինականության սահմանադրական սկզբունքի իրացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները⁵:

Ա. Վ. Գալախովան որպես քննարկվող հանցագործության անմիջական օբյեկտ առանձնացնում է դատարանի կողմից արդարադատության պատշաճ իրականացմանը նպաստող հասարակական հարաբերությունները, իսկ որպես լրացուցիչ օբ-

¹ Տե՛ս Լեբեձե՜վ **В.М.** Становление и развитие судебной власти в Российской Федерации, М., 2000, էջ 29-30:

² Տե՛ս Լոբանո՜վա **Л.В.** «Преступления против правосудия: теоретические проблемы классификации и законодательной регламентации», Волгоград, 1999 թ., էջ 130:

³ Տե՛ս Միլյուկո՜վ **С. Ф.** Преступления против правосудия, Санкт-Петербург, 1999, էջ 35:

⁴ Տե՛ս Թեփլյա՜շին **П. В.** Преступления против правосудия (Понятия и классификации), Калуга, 2004, էջ 65:

⁵ Տե՛ս Ֆեձորո՜վ **А. В.** Преступления против правосудия, Красноярск, 2004, էջ 222:

յեկտ՝ հասարակական այն հարաբերությունները, որոնց բովանդակությունը կազմում են կոնկրետ անձի (ինչպես տուժողի, այնպես էլ նրա մերձավորների), հետևապես և հանրության ու պետության սահմանադրական իրավունքները և օրինական շահերը¹:

Մեր հայրենակից Ս. Է. Ասիկյանը որպես տվյալ հանցագործության անմիջական օբյեկտ է մատնանշում օրինականության սկզբունքի իրացման կապակցությամբ դատարանի գործունեության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները: Իսկ լրացուցիչ օբյեկտ, ըստ նրա, կարող են լինել պատիվը և արժանապատվությունը, գույքային շահերը, ամբաստանյալի (դատապարտյալի) անձնական ազատությունը և այլն²:

Մեր կարծիքով, խնդրո առարկա հանցագործության անմիջական օբյեկտ են դատական իշխանության հեղինակությունը, դատական մարմինների բնականոն գործունեությունը և դատարանի կողմից արդարադատության իրականացման գործընթացում դրսևորվող հասարակական հարաբերությունները: Լրացուցիչ օբյեկտ են մարդու իրավունքներն ու օրինական շահերը:

Ասվածը հիմնավորվում է նրանով, որ դատարանի կողմից կայացվող ակտերը շոշափում են մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները, քաղաքացիների և կազմակերպությունների շահերը: Դրա համար էլ անարդար դատական ակտի կայացումը էական վնաս է հասցնում ինչպես պետությանը, այնպես էլ ֆիզիկական ու իրավաբանական անձանց³:

Քննարկվող հոդվածով նախատեսված հանցագործության **օբյեկտիվ կողմը** դրսևորվում է անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու մեջ:

Դատավճիռ եզրույթի հասկացությամբ բովանդակության բացահայտման առումով ելակետային կողմնորոշիչ նշանակություն ունի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 6-ը, որի համաձայն՝ «*դատավճիռը դատական նիստում կայացված առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի որոշումներն են ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության, նրա նկատմամբ պատիժ կիրառելու կամ չկիրառելու և այլ հարցերով*»:

Վճիռ ասելով, թերևս, պետք է հասկանալ *վերջնական դատական ակտ*, որպիսին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (հոդված 241¹¹-ի 2-րդ մաս) իմաստով համարվում է ՀՀ *քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով առաջին ատյանի դատարանի կայացրած և ուժի մեջ մտած, բողոքարկման ոչ ենթակա, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կայացրած և ուժի մեջ մտած, գործի քննությունը սկսելը և շարունակելը բացառող, ինչպես նաև գործն ըստ էության լուծող դատական ակտը*:

Դատական այլ ակտ հասկացությունն անհամեմատ առավել լայն է, քանզի ներառում է *դատավճիռ և վճիռ չհանդիսացող, քաղաքացիական, քրեական, վարչական և սահմանադրական արդարադատության իրականացման գործընթացում, ինչպես նաև քրեական գործերով մինչդատական վարույթում ընդունվող և օրենքով*

¹ Տե՛ս **Аспикийн С. Э.** Уголовно-правовое обеспечение реализации конституционных принципов осуществления правосудия, М., 2003, էջ 10:

² Տե՛ս **Галахова А. В.** Преступления против правосудия, М., 2005, էջ 197:

³ Տե՛ս **Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք:** Հատուկ մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով)։ /- Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 945-946:

նախատեսված բոլոր իրավական ակտերը (օրինակ՝ գործի վարույթը կասեցնելու, կալանքը որպես խափանման միջոց կիրառելու, փորձաքննություն նշանակելու մասին որոշումները):

Հատկանշական է, որ այս շարքում առայժմ հնարավոր չէ ներառել սահմանադրական արդարադատության իրականացման ընթացքում կայացվող իրավական ակտերը՝ պայմանավորված այն իրողությամբ, որ ներկա իրավակարգավորման պայմաններում Սահմանադրական դատարանի անդամն այս հանցագործության սուբյեկտ պարզապես չի հանդիսանում, ինչին առավել մանրամասն կանդիդատներն քննարկվող հանցակազմի սուբյեկտի վերաբերյալ դիտարկումներում:

Գրականության մեջ առկա է նաև այն տեսակետը, ըստ որի՝ հոդված 352-ի իմաստով դատական այլ ակտեր են համարվում առաջին ատյանի դատարանի կողմից կայացվող այն դատավարական փաստաթղթերը, որոնք էականորեն ազդում են գործի լուծման վրա կամ շոշափում են անձի կարևոր իրավունքներն ու ազատությունները, իսկ դատական այն ակտերը, որոնք չեն ազդում գործն ըստ էության լուծելու վրա և միայն կազմակերպական բնույթի հարցեր են լուծում, հոդված 352-ի իմաստով դատական ակտ չեն¹:

Կարծում ենք, որ նշված մոտեցումը հիմնավոր չէ այնքանով, որքանով քննության առարկա հոդվածը, ամրագրելով «դատական այլ ակտ» արտահայտությունը, որևէ բացառություն կամ մասնավորեցում չի անում դրանց վերաբերյալ, իսկ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 4-ի 5-րդ կետն էլ սահմանում է, որ *դատական ակտեր են հանդիսանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարանի, վերաքննիչ դատարանի կամ Վճռաբեկ դատարանի որոշումները, վճիռները կամ դատավճիռները*:

Ուստի իրավակիրառ պրակտիկայում քննարկվող հանցակազմի իմաստով «դատական այլ ակտ» ասելով պետք է հասկանալ օրենսդրությամբ նախատեսված և դատարանի կողմից կայացվող բոլոր ակտերը՝ բացառությամբ արդարադատության իրականացմանը չվերաբերող ակտերի, օրինակ՝ ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից տրվող եզրակացությունների, ինչպես նաև ՀՀ բոլոր դատարանների կողմից կայացվող աշխատակարգային որոշումների:

Միաժամանակ հարկ է նկատել, որ վերը հիշատակված հոդվածի շարադրանքից նպատակահարմար կլիներ հանել «դատական այլ ակտ» արտահայտությունը և փոխարենն ամրագրել դատական միայն այն ակտերը, որոնք սահմանափակում են քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները կամ վնաս պատճառում դրանց (օրինակ՝ խափանման միջոց կիրառելու մասին, բնակարանի խուզարկության մասին, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները վերահսկելու, հեռախոսային խոսակցությունները լսելու մասին միջնորդությունների վերաբերյալ դատարանի որոշումները կամ դատական տուգանք կիրառելու մասին նույն դատական նիստում կայացվող դատարանի առանձին որոշումը և այլն):

Անդրադառնալով դատական ակտի անարդարության չափանիշին՝ հարկ է նշել, որ անարդար է համարվում այն դատական ակտը, որը կայացվում է նյութական և դատավարական իրավունքի նորմերի պահանջների կոպիտ խախտմամբ²: Այդպիսի պահանջներն առարկայացած են ճյուղային օրենսդրություններում: Մաս-

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս, էջ 946:

² Տե՛ս նույն տեղում:

նափորապետ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 358-ի համաձայն. «Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված: Դատարանի դատավճիռն օրինական է, եթե այն կայացվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, սույն օրենսգրքի և այն օրենքների պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառվում են տվյալ քրեական գործը լուծելիս: Դատարանի դատավճիռը հիմնավորված է, եթե դրա հետևությունները հիմնված են

- միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա.
- այդ ապացույցները բավարար են մեղադրանքը գնահատելու համար.
- դատարանի կողմից հաստատված ճանաչված հանգամանքները համապատասխանում են դատարանում հետազոտված ապացույցներին:

Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:

Կամ, օրինակ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով հոդված 130-ի 3-րդ մասը, հոդված 130.1.-ն ամբողջությամբ, որով սահմանվում են վճռի օրինականությունը, հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը. «Առաջին ատյանի դատարանի վճիռն օրինական է, եթե այն կայացվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, սույն օրենսգրքի, այլ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառելի են տվյալ գործը քննելիս:

Առաջին ատյանի դատարանի վճիռը հիմնավորված է, եթե վճռում շարադրված եզրահանգումները և հաստատված փաստերը համապատասխանում են առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցներին:

Առաջին ատյանի դատարանի վճիռը պատճառաբանված է, եթե դրանում երևում են փաստերի հաստատման, ապացույցների գնահատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները»:

Միաժամանակ, դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտման հասկացությունն ընդհանուր իմաստով բացահայտվում է ՀՀ դատական օրենսգրքով, որի հոդված 153.2-ի համաձայն.

«2. Կոպիտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի այն խախտումը, որը հեղինակագրվում է արդարադատությունը կամ անհամատեղելի է դատավորի բարձր կոչման հետ:

3. Կոպիտ է նաև պարբերաբար կատարված այն խախտումը, որը, առանձին վերցրած, կարող է այդպիսին չհամարվել, սակայն իր պարբերականությամբ հեղինակագրվում է արդարադատությունը կամ դատավորի բարձր կոչումը»:

Անարդար կհամարվեն, օրինակ, անմեղ անձի նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը, հանցագործության մեջ մեղավոր անձին արդարացնող դատավճիռը, արարքի սխալ իրավաբանական որակումը, ակնհայտ մեղմ կամ խիստ պատժի նշանակումը, քաղաքացիական գործերով այնպիսի վճիռը, որով անհիմն լրիվ կամ մասնակիորեն բավարարվել կամ հակառակը՝ չի բավարարվել հայցը, գործի նյութերի միակողմանի և ոչ լրիվ ուսումնասիրությունը, եզրակացությունների հակասությունը գործի փաստական հանգամանքներին:

Թեև քննարկվող հանցակազմը ձևական է, սակայն հարկ է նշել, որ դատավարական նորմերի ոչ բոլոր, նույնիսկ կոպիտ խախտումներն են, որ պետք է որակվեն

որպես ակնհայտ անարդար դատավճռի, վճռի կամ դատական այլ ակտի կայացում: Եթե այդպիսի խախտումները (օրինակ՝ բացակայում է նիստի արձանագրությունը, խախտվում է ամբաստանյալի պաշտպանության իրավունքը և այլն) չեն հանգեցրել վերը նշված հետևանքների առաջացմանը (մեղավորի արդարացում, անմեղի դատապարտում և այլն), այսինքն՝ չեն վտանգում արդարության չափանիշը, ապա Օրենսգրքի հոդված 352-ով նախատեսված հանցակազմը բացակայում է¹:

Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատական ատյանների կայացրած ակտերը համարվում են անարդար, եթե դրանցով առաջին ատյանի դատարանի ակտերը անհիմն թողնվում են անփոփոխ կամ հակառակը՝ անհիմն փոփոխվում են, որի պատճառով դատական ակտը դառնում է անարդար²:

Քննարկվող հանցակազմը ձևական է. հանցագործությունն ավարտված է համարվում դատական ակտը կայացնելու պահից: Թեև գիտության մեջ այս հարցի կապակցությամբ նույնպես առկա են տարաբնույթ մոտեցումներ, այնուամենայնիվ գտնում ենք, որ պայմանավորված ՀՀ դատական օրենսգրքի հոդված 20-ի 3-րդ մասի բովանդակությամբ (գործն ըստ էության լուծող դատական ակտի եզրափակիչ մասը հրապարակվում է դատարանի դռնբաց նիստում)՝ վեջնական դատական ակտերի պարագայում դրանց կայացման պահ պետք է համարել հրապարակման պահը, իսկ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի պարագայում՝ դրանց ընդունման պահը:

Հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ. հանցավորը գիտակցում է, որ անարդար դատական ակտ է կայացնում և ցանկանում է դա: Այդ մասին է վկայում հոդվածի դիսպոզիցիայում «ակնհայտ» եզրույթի գործածումը: Կայացած դատավճռի կամ դատական այլ ակտի անարդարացիությունը պետք է գիտակցվի դատական այդ ակտը կայացնողի կողմից: Եթե անարդար դատավճռը կամ դատական այլ ակտը սխալի արդյունք է, ապա համապատասխան հատկանիշների առկայության դեպքում արարքը կարող է որակվել որպես պաշտոնեական անփութություն:

Դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի խախտման «ակնհայտ» լինելու վերաբերյալ ձևակերպում է բովանդակում ՀՀ դատական օրենսգրքի հոդված 153.2-ի 1-ին մասը, համաձայն որի.

«(...) ակնհայտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի այն խախտումը, որի առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով»:

Վերը նշվածների կապակցությամբ հետաքրքրական է Ա. Ս. Գորելիկի մոտեցումը. նա նպատակահարմար է գտնում անզգուշությամբ անարդար դատական ակտ կայացնելու համար քրեական օրենսգրքում առանձին հանցակազմ նախատեսելը³:

Անհրաժեշտ է մատնանշել, որ քննարկվող մոտեցումը տեղ է գտել այլ երկրների օրենսդրություններում: Մասնավորապես՝ Իսպանիայի քրեական օրենսգրքը տարբերակում է քննարկվող հանցագործությունների կատարումը դիտավորությամբ

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս, էջ 946:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս Գորելիկ Ա. Ս., Լոբանովա Լ. Վ. Преступления против правосудия, Санкт-Петербург, 2005, էջ 238:

յամբ (հոդված 446) և անզգուշությամբ (հոդված 447) («կոպիտ անփութությամբ կամ աններելի չիմացությամբ»): Այս առումով հատկանշական է, որ այդ վերջին՝ հոդված 447-ի բովանդակությանը նման դրույթ ամրագրված է նաև ՀՀ օրենսդրությամբ, բայց ՀՀ դատական օրենսգրքով, որի հոդված 153-ի 2-րդ մասի համաձայն.

«Դատավորի կարգապահական պատասխանատվության հիմքերն են՝

1) արդարադատություն իրականացնելիս նյութական նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը, որը կատարվել է չարամտորեն կամ կոպիտ անփութությամբ.

2) արդարադատություն իրականացնելիս դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը, որը կատարվել է չարամտորեն կամ կոպիտ անփութությամբ»:

Սակայն, օրինակ՝ Դ. Ի. Ուեմովն ունի ասվածին տրամազօրեն հակառակ մոտեցում, մասնավորապես՝ նա գտնում է, որ ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը ոչ թե սխալ է, այլ՝ ուղղակի դիտավորության արդյունք: Դատական սխալը՝ որպես փաստերի չիմացության կամ դրանց գնահատումից խուսափելու հետևանք, դատավորների բարեխիղճ մոլորություն է, որն էլ իր հերթին բացառում է վերջիններիս քրեական պատասխանատվությունը¹:

Անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է հանցագործության շարժառիթը. հանցագործությունն առկա է միայն այն դեպքում, եթե կատարվում է շահադիտական կամ այլ անձնական դրդումներով:

Շահադիտական դրդումները կարող են դրսևորվել բազմազան ձևերով: Մասնավորապես, դատավորը անարդար դատական ակտ է կայացնում կաշառքի վերցնելով: Նկարագրված դեպքում արարքը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ: Այլ անձնական դրդումները նույնպես կարող են բազմազան դրսևորումներ ունենալ՝ խանդ, վրեժ և այլն:

Հանցագործության **սուբյեկտը** հատուկ է. այդպիսին են միայն դատավորները: ՀՀ դատական օրենսգրքի հոդված 4-ի 1-ին մասի համաձայն՝ *«դատավոր է Վճռաբեկ դատարանի նախագահի, պալատների նախագահների և դատավորների, ինչպես նաև առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի դատավորի կամ դատարանի նախագահի պաշտոնում օրենքով սահմանված կարգով նշանակված անձը»:*

Ասվածից միարժեքորեն բխում է, որ ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահն ու անդամներն այս հանցագործության սուբյեկտ չեն: Մինչդեռ հարկ է նկատել, որ Սահմանադրությունը, ի տարբերություն 2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով սահմանադրության, գործածում է ոչ թե «Սահմանադրական դատարանի անդամ», այլ «Սահմանադրական դատարանի դատավոր» եզրույթը (օրինակ՝ հոդված 164-ի 3-րդ մաս, 9-րդ մաս, հոդված 165-ի 1-ին մաս, հոդված 166-ի 1-ին մաս, 8-րդ մաս, հոդված 168 և այլն):

Սահմանադրության հոդված 209-ի 6-րդ մասի համաձայն. *«Սահմանադրության (...) 5-8-րդ (...) գլուխներն ուժի մեջ են մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը: Մինչ այդ շարունակում են գործել 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության համապատասխան դրույթները»:*

Քանի որ Սահմանադրական դատարանի դատավորների վերաբերյալ իրավակարգավորումները նախատեսված են Սահմանադրության 7-րդ գլխով (Դատարան-

¹ St`u **Титова А. В.** Проблема установления умысла судьи на вынесение заведомо неправосудных решений //Юристы-Правоведъ. 2009, № 5 (36), էջ 14:

ները և Բարձրագույն դատական խորհուրդը), ուստի մինչև 2018 թվականի ապրիլ ամիսը գործելու է ներկա իրավակարգավորումը:

Միաժամանակ, Սահմանադրության հոդված 103-ի 2-րդ մասի համաձայն. *«Ազգային ժողովի կանոնակարգը, Ընտրական օրենսգիրքը, Ղատական օրենսգիրքը (ընդգծումը մերն է), Սահմանադրական դատարանի մասին օրենքը, Հանրաքվեի մասին օրենքը, Կուսակցությունների մասին օրենքը և Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքը սահմանադրական օրենքներն են»:*

Ուստի կարծում ենք, որ մինչև Սահմանադրությանը համապատասխան նոր Ղատական օրենսգրքի ընդունումը նպատակահարմար կլիներ ՀՀ դատական օրենսգրքի հոդված 4-ի 1-ին մասի շարադրանքում ավելացնել նաև «Սահմանադրական դատարանի նախագահի և անդամների» արտահայտությունը, որպեսզի վերջիններս նույնպես համարվեն սույն հանցագործության սուբյեկտ, այնքանով, որքանով վերջիններս նույնպես իրականացնում են արդարադատություն:

ՀՀ քր. օր.-ի հոդված 352-ի երկրորդ մասում որպես հանցակազմի ծանրացնող հանգամանք է նախատեսված անզուլույթամբ ծանր հետևանքների առաջացումը, իսկ երրորդ մասում՝ որպես առավել ծանրացնող հանգամանք՝ նույն հետևանքների առաջացումը դիտավորությամբ.

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է միարժեքորեն փաստել, որ եթե քննարկվող հանցագործությունը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ, ապա հոդվածի երկրորդ և երրորդ մասերի պարագայում՝ հետևանքների նկատմամբ կարող է դրսևորվել ինչպես անզուլույթություն, այնպես էլ դիտավորություն (թե՛ ուղղակի, թե՛ անուղղակի):

Կարծում ենք, որ հանցակազմում նշված վերջին՝ ծանրացնող հանգամանքի առկայությունն արդարացված համարվել չի կարող, քանի որ նման պայմաններում անձի արարքը, ով դիտավորություն է դրսևորել ծանր հետևանքների առաջացման կապակցությամբ, իրավակիրառողի կողմից չի կարող որակվել հանցագործությունների համակցության կանոններով:

Ծանր հետևանքներ կարող են համարվել անմեղ անձին ազատագրկման դատապարտելը, անձի ինքնասպանությունը, անձի աշխատանքային, բնակարանային կամ այլ կարևոր իրավունքների խախտումը, անձի ընտանիքի համար ծանր հետևանքների առաջացումը և այլն¹:

Ամփոփելով սույն հանցակազմի ծանրացնող հանգամանքների քննարկումը՝ կարծում ենք, որ ճիշտ կլիներ որպես այս հանցակազմի ծանրացնող հանգամանք մատնանշել նաև նույն արարքի կատարումը մի խումբ անձնանց կողմից նախնական համաձայնությամբ:

Ասվածը հիմնավորվում է նրանով, որ դատավորների կողմից կոլեգիալ կազմով արդարադատության իրականացումը կոչված է վերացնելու ստորադաս դատական ատյաններում թույլ տրված տարաբնույթ շտկելի սխալները, որի պարագայում մի քանի դատավորների կողմից սույն հանցագործությունը նախնական համաձայնությամբ կատարելը ձեռք է բերում անհամեմատ առավել մեծ հանրային վտանգավորություն:

Այս հանցակազմի իրացման կապակցությամբ հատկապես ուշադրության է արժանի ՀՀ դատական օրենսգրքի հոդված 13-ի 6-րդ մասը, որի համաձայն՝ *«դատա-*

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս, Երևան, ԵՊՀ հրատ., 2012, էջ 947:

վորի կողմից շահադիտական կամ անձնական այլ դրողուններով ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու փաստի առթիվ քրեական հետապնդում չի կարող հարուցվել, եթե այդ ակտը վերադաս դատարանի կողմից բեկանված չէ»:

Նորմը խնդրահարույց է այնքանով, որքանով առանձին դատական ակտեր (օրինակ՝ խափանման միջոցի հարցը լուծող միջանկյալ դատական ակտեր) վերադաս դատարանի կողմից կարող են ոչ թե բեկանվել, այլ վերացվել, բացի այդ՝ *նորմը տարրնթերցման տեղիք է տալիս Վճռաբեկ և Սահմանադրական դատարանների մասով, քանի որ վերջիններս չունեն վերադաս դատական ատյան:*

Ուստի նպատակահարմար կլիներ վերոնշյալ մտահոգություններին համարժեք փոփոխություններ կատարել սույն հոդվածի շարադրանքում:

Քննարկվող նորմի կապակցությամբ ուշագրավ է Ռուսաստանի Ղաշնության Սահմանադրական դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 23 որոշումը, որի շրջանակներում դատարանն արձանագրել է հետևյալը. «Ուժի մեջ մտած և չվերացված ու չփոփոխված դատական ակտը չի կարող դիտվել անարդար: Եթե դատական ակտի ապօրինի և չհիմնավորված լինելու վերաբերյալ բացակայում են վերադաս դատարանի հաստատումները, ապա այդպիսի ակտի արդար լինելն արդեն իսկ ենթադրվում է»:

Վերադառնալով ՀՀ դատական օրենսգրքի խնդրո առարկա նորմի բովանդակությանը՝ պետք է փաստել, որ դրա ինքնավար մեկնաբանությունից բխում է, որ եթե անգամ սահմանված ընթացակարգերի պահպանմամբ քրեական գործ հարուցվի Օրենսգրքի հոդված 352-ի հատկանիշներով, այսուամենայնիվ համապատասխան դատավորին որպես մեղադրյալ ներգրավել, ինչպես նաև մինչև այդ նրան ձերբակալել կամ նրա նկատմամբ խափանման միջոց կիրառել հնարավոր չի լինի, քանի դեռ ակնհայտ անարդար դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը վերադաս դատարանի կողմից բեկանված չէ:

Միաժամանակ կարծում ենք, որ քննարկվող նորմի իրացման առումով ճիշտ կլիներ հիշատակվող դրույթն ամրագրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, որը կկանխեր այս նորմի կիրառման իրավական հնարավորությունների վերաբերյալ տարաբնույթ մեկնաբանությունները:

SOME CONSIDERATIONS ON CORPUS DELICTI ABOUT “ADOPTION OF AN OBVIOUSLY UNJUST COURT SENTENCE, VERDICT OR OTHER COURT ACT”

Artur Nahapetyan

PhD student of the European Regional Academy, chair of Jurisprudence

The article 352 of RA's Criminal Code defines criminal responsibility for adoption of an obviously unjust court sentence, verdict or other court act. Among the other means of responsibilities the existence of such corpus delicti is aimed to prevent the abuse by the authorities, which are responsible for administration of justice, via criminal responsibility threat. However, it is to be noted that a lot of issues related to the concerned corpus delicti haven't received regulation with accurate certitude.

Thus, an attempt was made to investigate comprehensively the pros and cons of the approaches found in juridical literature on the above-mentioned corpus delicti, compare them with legal acts constituting a legislative basis and present reasoned conclusions through corresponding analyses.

НЕКОТОРЫЕ СУЖДЕНИЯ ОТНОСИТЕЛЬНО СОСТАВА ПРЕСТУПЛЕНИЯ “ВЫНЕСЕНИЕ ЗАВЕДОМО НЕПРАВОСУДНЫХ ПРИГОВОРА, РЕШЕНИЯ ИЛИ ИНОГО СУДЕБНОГО АКТА”

Артур Напетян

Аспирант кафедры юриспруденции Европейской Региональной Академии

Статья 352 Уголовного кодекса РА предусматривает уголовную ответственность за вынесение заведомо неправосудных приговора, решения или иного судебного акта. Наличие подобного состава преступления направлено на предотвращение возможной опасности злоупотребления должностными полномочиями лицами, ответственными за осуществление правосудия, посредством введения наряду с прочими мерами ответственности уголовной ответственности за подобные злоупотребления. Однако следует отметить, что ряд вопросов, связанных с рассматриваемым составом преступления, еще не получил надлежащего решения и нуждается в доработке.

Поэтому в статье мы попытались исследовать подходы “за” и “против” в юридической литературе, охватывающей рамки данного состава преступления, сопоставить их с правовыми актами, составляющими основу законодательства, и посредством соответствующего анализа представить аргументированные выводы.

Բանալի բառեր – *ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ, դատական այլ ակտ, դատական իշխանություն, դատավոր, արդարադատություն, սահմանադրություն, քրեական օրենսգիրք, քրեական պատասխանատվություն*

Ключевые слова – *заведомо неправосудный приговор, решение или иной судебный акт, судебная власть, судья, правосудие, конституция, уголовный кодекс, уголовная ответственность*

Key words - *obviously unjust court sentence, verdict, other court act, judicial power, judge, justice, constitution, criminal code, criminal responsibility*